ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Հ. Մարգարյան

<<01>> սեպտեմբեր 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

3-4-րդ դասարաններ

Ուսումնական հաստատության անվանումը. դասարան

Օսիպյան Զարնե Ռոբերտի

Դասղեկի ազգանունը. անունը. հայրանունը

<<2023-2024>> ուստարի

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուսումնական տարում Արփունքի միջնակարգ դպրոցի 3-րդ 4-րդ երկկազմ դասարանում սովորում են՝ 3-րդ դասարանում մեկ (1 տղա)աշակետ,իսկ 4-րդ դասարանում երեք (1 աղջիկ, 2 տղա) աշակերտ : Աշակերտները ակտիվ են ընկերասեր,մասնակցում են դպրոցական և դասարանական միջոցառումներին:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հետևողական լինել առաջադիմող աշակերտներին, խրախուսել լավ սովորող ու կարգապահ աշակերտներին, նրանց փոխհարաբերությունները այլ կոլեկտիվների հետ , վարքի կանոնների և նորմերի կատարմանը: Ամրապնդել տղա-աղջիկ , մեծերի և փոքրերի փոխհարաբերույթունները , սեփական և ուրիշի մտքերը գնահատելու կարողության զարգացմանը , ինքնավստահության, ինքնադաստիարակչական,
ինքնավերահսկման և ինքնագնահատման գործոնները , սովորելու հմտությունները , կարողույթունները և ունակությունների առկայությունը ուսման ընթացքում և նպաստել հայրենասիրության խորացմանը, ուսումնական ծրագրերի լիարժեք յուրացմանը:

3. Հայեցի դաստիարակություն

- Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը բարդ գործընթաց է, որը բազմաթիվ թելերով սերտորեն կապված է ինչպես երեխային շրջապատող սոցիալական միջավայրի, այնպես էլ դաստիարակության տարբեր ձևերի հետ: Այն առաջին հերթին առնչվում է բարոյական դաստիարակության հետ3 : Բարոյահոգեբանական
դաստիարակությունը կոչված է ձևավորելու և զարգացնելու դպրոցականների գեղագիտական ճաշակը, ինչպես նաև վերաբերմունքը մարդու և հասարակության բարոյական կենսագործունեության նկատմամ:

- Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների,կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը,շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի,գեղագիտական գնահատականի ձևավորմանը:
Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում,գեղեցիկն ընկալելու,զգալու և գնահատելու ընդունակություն:Գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է հուզազգացմունքային ոլորտի զարգացումը: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է ավագ նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը,ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության,բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը նույնպես կապված է հոգևոր դաստիարակության հետ: Արվեստի ստեղծագործությունների հայրենասիրական բովանդակությունը կարելի է լավագույնս օգտագործել այս նպատակի իրականացման համար: Ռազմահայրենասիրական ու հոգևոր դաստիարակությունների կապն ու նշանակությունը հատկապես մեծ են մեր օրերում: Մեր երիտասարդ, անցումային շրջանում գտնվող հանրապետության համար այս խընդիրն առաջնային է, որովհետև ուղղակիորեն ազգային անվտանգության կարևորություն ունի :

- Ֆիզիկական դաստիարակություն

Հոգևոր դաստիարակության վրա ազդեցություն ունի նաև ֆիզիկական դաստիարակությունը: Վ. Սուխոմլինսկին գրում է. «Ֆիզիկական կուլտուրան մարդու բազմակողմանի, ներդաշնակ զարգացման կարևորագույն տարրն է: Այն ապահովում է մարդու ֆիզիկական զարգացման և հոգևոր կապի բազմակողմանի գործունեության նշանակությունը»:
Դեռևս հին հույներն իրենց կրթադաստիարակչական գործընթացում մեծ մասամբ հենվում էին հոգևոր (գեղագիտական) և ֆիզիկական դաստիարակության վրա՝ կարծելով, որ գեղեցիկ մարմնում պետք է գեղեցիկ հոգի լինի և՝ հակառակը:

- Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը՝ որպես համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևորագույն ուղղություն, նույնպես սերտ փոխկապակցության մեջ է հոգևոր դաստիարակության հետ: Գնալով ավելի է կարևորվում աշխատանքային և հոգևոր դաստիարակության փոխազդեցությունը, քանի որ տքնաջան աշխատանքի շնորհիվ են ստեղծվում արվեստի գործեր, հոգևոր

արժեքներ: Մարդու աշխատանքային գործունեությունն ուղղված է իրականության վերակերտմանը, կատարելագործմանը: Ստեղծագործական աշխատանքից ստացած բերկրանքը մարդուն պարգևում է հոգեկան բավարարվածության6 : Դարեր շարունակ աշխատանքը՝ որպես հոգևոր բավարարման միջոց, դրվատվել և փառաբանվել է մեծ մտածողների կողմից:

- Բնապահպանական դաստիարակություն

Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է նաև երկրում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական իրավիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի տարբերություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի, հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի միջև :

-Դպրոց-ընտանիք կապը

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ծննդ. Օր, ամիս, տարի	Սեռը	Հասցե
3-րդ դասարան						
1	Ասլանյան	Արեն	Արմենի	04.04.2016թ.	ար.	գ. Արփունք
N	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ծննդ. Օր, ամիս, տարի	Սեռը	Հասցե
4-րդ դասարան						
1	Ասլանյան	Արթուր	Արմենի	30.04.2014թ.	ար.	գ. Արփունք
3	Հովհաննիսյան	Լուսինե	Բարիսի	16.04.2014թ.	իգ.	գ. Արփունք
4	Մարտիրոսյան	Ակսել	Սամվելի	16.09.2014թ.	ար.	գ. Արփունք

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Գիտելիքը ուժ է:		Դասղեկ
II	Մասնագիտություններ, որ հետաքրքրում են ինձ՝անկախ Հայաստանի քաղաքացուս :		Դասղեկ
III	Իմ երազանքներն ու նպատակները:		Դասղեկ
IV	Հարգի՛ր մեծերին:		Դասղեկ
V	Ով չի սիրում իր երկիրը,ոչինչ սիրել չի կարող:		Դասղեկ
VI	Հայաստա՛ն ուզում եմ քեզ հայտնել իմ սերը:		Դասղեկ
VII	Ազնվություն և ճշմարտացիություն:		Դասղեկ
VIII	Մարդիկ որոնք աչքի են ընկել իրենց քաջությամբ:		Դասղեկ
IX	Պատերազմ և խաղաղություն:		Դասղեկ
X	Արդարացի և անարդար արարքներ:		Դասղեկ
XI	Մասնագիտությունների մոլորակ:		Դասղեկ
XII	Բարությունը կփրկի աշխարհը:		Դասղեկ
XIII	Ինչով է պայմանավորված մասնագիտության կարևորությունը:		Դասղեկ
XIV	Ինչ դառնալ կյանքում... Ամենամեծ պաշտոնը երկրի վրա:		Դասղեկ

XV	Ամանորյա հեքիաթ		Դասղեկ
XVI	Մասնագիտությունների մոլորակ		Դասղեկ
XVII	Ներելը ուժեղին և մեծ հոգուն է բնորոշ:		Դասղեկ
XVIII	Իսկական ընկերը		Դասղեկ
XIX	Գիրքը իմ բարեկամն է		Դասղեկ
XX	Պահպանենք բնությունը		Դասղեկ
XXI	Առողջ ապրելակերպ		Դասղեկ
XXII	Բարին իմ աչքերով		Դասղեկ
XXIII	Մեր պետության խորհրդանիշները		Դասղեկ
XXIV	Համակարգիչը թշնամի է թե բարեկամ		Դասղեկ
XXV	Մենք խաղաղություն ենք ուզում		Դասղեկ
XXVI	Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, օրհներգ		Դասղեկ
XXVII	Քո առողջության անձնական հիգիենան		Դասղեկ
XXVIII	Ատամներս առո՞ղջ են…		Դասղեկ
XXIX	Ինչպես խուսափել հիվանդանալուց		Դասղեկ
XXX	Աշխատանքը բարիք է տալիս		Դասղեկ
XXXI	Գարունը նման է մայրիկիս		Դասղեկ
XXXII	Իմ տունը, իմ այգին		Դասղեկ
XXXIII	Աշխատանքի անհրաժեշտությունը		Դասղեկ
XXXIV	Ամռան երանգներ		Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		**2**-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Հինգշաբթի		Հինգշաբթի	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	ծանոթություն
	Ծնողխորհրդի ընտրություն և ուսումնական տարվա անելիքների քննարկում	Ընտրվեց նախագահ և անդամներ Քննարկվեց ուսումնակական տարվա անելիքքները և կազմակերպչական հարցեր	Կատարված է

ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օ/ա/տ	Քննարկվող հարցերը	Զրույցի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
	Կազմակերպչական հարցեր	Ընտրվեց ծնողական խորհուրդի նախագահ և անդամներ քննարկվեց կազմակերպչական հարցեր	Կատարված է